



«Հինվորի Մայր» հասարակական կազմակերպություն

Общественная организация «Зинвори майр»

**ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆՆԵՐ.
ՔԱՅԼ ԴԵՊԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ОБЩЕСТВЕННЫЕ ПРИЕМНЫЕ.
ШАГ К ГРАЖДАНСКОМУ ОБЩЕСТВУ**

Գրքույկը հրատարակված է
«Զինվորի մայր» հասարակական կազմակերպության
կողմից Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության
Կազմակերպության Երևանյան գրասենյակի
ֆինանսական աջակցությամբ

Издание брошюры осуществлено общественной
организацией «Зинвори майр» при финансовом содействии
Ереванского офиса Организации Безопасности и Сотрудничества в Европе.

Գրքույկը ներառում է նյութեր, կապված Հանրապետության տարբեր շրջաններում 2006թ.
ութ ամիսների ընթացքում գործող Հանրային Ընդունարանների աշխատանքների հետ`
«Հանրային ընդունարանների ստեղծումը ՀՀ մարզերում» ծրագրի շրջանակներում

Издание охватывает материалы, связанные с работой Общественных Приемных в разных районах
Республики на протяжении восьми месяцев 2006 года, в рамках программы «Создание
Общественных приемных в марзах РА».

Մեր հասցեն է`
Երևան, Խանջյան, 5, 107 սենյակ
հեռ. 52-32-02, 52-99-31
E-mail: armgreta@arminco.com
[www. zinvori-mair-ngo.am](http://www.zinvori-mair-ngo.am)

Наш адрес:
Г. Ереван, ул. Ханджяна, 5/107
Тел: 52-32-02, 52-99-31
E-mail: armgreta@arminco.com
[www. zinvori-mair-ngo.am](http://www.zinvori-mair-ngo.am)

«Զինվորի մայր» կազմակերպությունը հայտնում է իր երախտագիտությունը
Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության
Երևանյան Գրասենյակին` համագործակցության և մշտական աջակցության համար

Организация «Зинвори майр» выражает глубокую признательность Ереванскому офису
Организации Безопасности и Сотрудничества в Европе за сотрудничество и постоянное
содействие.

«Զինվորի մայր» հասարակական կազմակերպությունը 15 տարեկան է:

Այդ ժամանակահատվածում կազմակերպությունը ակտիվորեն մասնակցել է երկրի հասարակական կյանքին: Յուրաքանչյուր կազմակերպության կայացումն ու առաջխաղացումն առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, թե ինչպես է այն արձագանքում հասարակությանը հուզող խնդիրներին:

«Զինվորի մայր» ՀԿ-ի առաքելությունն ուղղված է հասարակության, զինծառայողների և նրանց ընտանիքների իրավական աջակցությանը: Բնական է, որ գործունեության ընթացքում կազմակերպության առընչվել է նաև կոռուպցիոն ռիսկերի հետ, որտեղից և ծագել է հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը: Այդօրինակ ծրագրերի շարքում պետք է առանձնացնել մանուկի հրապարակումները, զինվորական օրենսդրության ոլորտում բնակչությանը տեղեկատվություն մատուցելու նպատակով հրատարակված մասնագիտական գրքերը: Այդ շարքում հատուկ տեղ է զբաղեցնում բազմիցս վերահրատարակված «Մեր որդին և ազգային բանակը» ձեռնարկը: Ըստ հասարակության արձագանքի՝ գրքի միջոցով ցուցաբերած օգնությունն անգնահատելի է:

«Զինվորի մայր» կազմակերպությունը անդիսանում է գործող «Անտիկոռ» կոալիցիայի անդամ: Կոալիցիան ձևավորվել է 2004 թվականին և ներառում է 12 կազմակերպություն /«Աքիլես», «Ասկլեպի», «Զինվորի մայր», Գործընթացների ազատականացման և մոնիտորինգի Ազգային կենտրոն, «Հայ վաճառականներ», «Սպառողների իրավունքների պաշտպանություն», Փոքր և միջին ձեռնարկատիրության կենտրոն, Արտադրողների և ձեռնարկատերեր Միություն, «Հակաստվեր», «Ֆեմիդա», Կրթության և հետազոտության Ընկերակցություն, Հայկական PR Ընկերակցություն/:

Կոալիցիայի գոյության կարճ ժամանակահատվածում ամեն մի անդամ կազմակերպություն՝ կատարելով իր առաքելությունը, միևնույն ժամանակ սերտ համագործակցել է գործընկերների հետ: Այդ համագործակցությունն էլ հնարավորություն սովեց իրականացնելու Կոալիցիայի գաղափարը՝ միասնական ծրագրի իրագործումը:

ՀՀ Կառավարության կողմից հակակոռուպցիոն ծրագրի մշակումից անմիջապես հետո «Զինվորի մայր» կազմակերպությունը Կոալիցիայի մյուս անդամների հետ մեկտեղ՝ յուրաքանչյուրն իր գործունեության դաշտում, ձեռնամուխ եղավ հակակոռուպցիոն ոլորտում ծավալվող ծրագրերի իրագործմանը:

Հասարակական կազմակերպությունների բազմամյա համագործակցությունը Հայաստանում Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության Հայաստանյան գարսենյակի հետ ունի հաջող ընթացք, որն արտացոլվում է քաղաքացիական հասարակություն ստեղծելու, խաղաղարարության, ՀԿ-ների կայացման և հզորացման ոլորտների նվաճումներում:

2006 թվականին Կոալիցիան առաջարկեց ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավարությանը ձեռնարկել համատեղ ծրագիր՝ միաժամանակ ներգրավելով Կոալիցիայի բոլոր անդամներին:

Առաջնային ուղղությունների ցանկում նշվում էր նաև հանրային ընդունարանների ստեղծումը: «Զինվորի մայր»ՀԿ-ն, բազմամյա փորձ ունենալով հանրային իրավական խորհրդատվություն իրականացնելու գործում, ընտրեց այդ ուղղությունը և հաջողությամբ իրականացրեց հակակոռուպցիոն պայքարի դաշտում հանրային ընդունարանների գործունեության իրականացման գաղափարը:

Իրականացված ծրագրի հիմնական նվաճումն է հանդիսանում ինչպես բնակչության տեղեկատվության մակարդակի ընդհանուր բարձրացումը, այնպես էլ հանրապետության տարբեր շրջաններում հանրային ընդունարանների գործունեության փորձի ներդրումը:

Հարկ է նշել, որ տվյալ միջոցառման շրջանակներում հասարակական կազմակերպություններ, ուժային կառույցների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև հաստատվել է փոխհամաձայնություն և գործնական սերտ համագործակցություն:

Ծրագրի իրագործման ընթացքը վերահսկելու, ինչպես նաև հանրային ընդունարանների գործունեության արդյունավետությունը պարզելու նպատակով, ծրագրի շրջանակներում պարբերաբար ընդունարանների հաճախողներին բաժանվել են հարցաթերթիկներ և հարցաշարեր: Հավաքվել է 1200 լրացված թերթիկ: Հարցման արդյունքներն ամփոփելուց հետո ստեղծվել է հետևյալ պատկերը.

1. ՀՀ «Զինապարտության մասին» Օրենքին ծանոթ են հարցվողների 39 %, 12% գիտեն Օրենքի որոշ կետերի մասին ծանոթներից և ազգականներից, իսկ 49% անծանոթ է Օրենքին:
2. Հարցվողների 64% նշել են զինկոմիսարիատների բարյացակամ վերաբերմունքը զորակոչիկների նկատմամբ, 19% այդ վերաբերմունքը որակավորել են որպես հոգատար, 14%` որպես անտարբեր, 3%` որպես թշնամական:
3. Հիվանդ զորակոչիկների ծնողների մեծ մասը` 62%, գիտեն` ինչ փաստաթղթեր է անհրաժեշտ ունենալ զորակոչիկի հիվանդության դեպքում, 38%` չգիտեն:
4. Զինվորական բուժփինանարկների կառուցվածքին ծանոթ են ընդամենը 26%, իսկ 74%` ոչ:
5. Բանակում անարդարության հետ առընչվել են հարցվողների 62%, մնացած 38% չեն հանդիպել անարդարության:
6. Հարցվողների 32% գտնում են, որ բանակում և ռազմաբժշկական հիմնարկներում հաճախ են հանդիպել շորթման դեպքերի, 68%` չի ժխտում դա, սակայն համարում է, որ այդ դեպքեր այնքան էլ հաճախ չեն:
7. Հարցվողների 69% համոզված են, որ «վճարովի» ինքնական արձակուրդի համար մեղավոր են ծնողները, 31% նշում են այլ «մեղավորների»` կրտսեր հրամանատարներին և զինվորներին:
8. Հարցվողների 68% տեսնում են դրական տեղաշարժեր բանակում, 32%` չեն արձանագրում այդ տեղաշարժը:
9. «Ի՞նչ փոփոխություններ կուզենայիք տեսնել բանակում» հարցին, ստացվել են բազմաթիվ պատասխաններ, որոնցից առավել հաճախ կրկվում են.
 - Կարգապահության ուժեղացում
 - Ծառայության ժամկետի նվազում
 - 18 տարին լրացած արական սեռի բոլոր երիտասարդների զորակոչ` անկախ կարգավիճակից
 - Մթերքի խիստ վերահսկում
 - Վառելանյութի խիստ վերահսկում
 - Ձորանոցներում և ճաշարաններում սանիտարա-հիգիենիկ պայմանների բարելավում
 - Սպայական կադրերի ճիշտ ընտրություն
 - Ծնողների այցելությունների համակարգում
 - Հովանավորժության և կոռուպցիայի դոմ պայքարի կազմակերպում
 - Զինվորների գրագիտության մակարդակի բարձրացում
 - Զինվորների ժամանցի կազմակերպում
 - Ձորանասերի համալրում մանկավարժ-հոգեբաններով
 - Ձորանասերի գրադարանային ֆոնդի ավելացում

Ծրագրի իրագործման ընթացքում լիարժեք աշխատում էին հանրային ընդունարանները Երևանում և Հայաստանի մարզերում` Շիրակում, Լորում, Արմավիրում, Սյունիքում, Գեղարքունիքում: Այդ ընդունարանների աշխատանքներին մասնակցում էին պետական, ուժային կառույցների, ինչպես նաև տեղական կառավարման և հասարակության

ներկայացուցիչներ: Ընդունարանները՝ որպես կանոն, տեղակայված էին թաղապետարաններում, մշակույթի տներում, դպրոցներում և այլուր: Բնակչության համար հանրային ընդունարանների աշխատանքը հանդիսանում էր պետական, տեղական կառավարման և հասարակական կառույցների համագործակցության առաջադեմ փորձ, քանի որ հենց այստեղ էր, որ նրանք կարող էին իրենց դիմումը կամ բողոքը ներկայացնել հենց այն պաշտոնյային կամ զինկոմիսսարիատի ներկայացուցչին, որի հետ այլ հանգամանքներում դժվար է հանդիպել:

Ծրագրի իրականացման ընթացքում հանրային ընդունարան են դիմել 1677 մարդ, այդ թվում՝ 738 տղամարդ և 939 կին: Ընդունարաններ դիմած շահառուների հարցերի վերլուծությունը ներկայացնում ենք ըստ առաջ քաշած խնդիրների հաճախականության.

- զորակոչիկի և զինծառայողի առողջական խնդիրները, բժշկական հետազոտության արդյունքները – 35 %
- իսկական զինվորական ծառայությունից ազատվելու խնդիրները – 8%
- զինծառայության ժամանակ ստացած հաշմանդամության խնդիրները-3%
- միայնակ մոր ուրդու զորակոչի խնդիրները – 4%
- հանրապետության բուհերի ընդունելության զեղչերի վերացման խնդիրը – 12%
- զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության խնդիրը – 1%
- զինվորի ծառայության ընթացքում ծնողների բնակության տարածքի պահպանման հարցը – 8%
- զինծառայողների դատական գործերի առնչությամբ խորհրդատվական ծառայության մատուցելու խնդիրը – 10%
- զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության խնդիրները – 12%
- զինծառայողների ընտանիքների բուժսպասարկման զեղչերի խնդիրը – 6%

Վերը նշված խնդիրները կարգավորվում են ՀՀ գործող օրենքներով և օրենսդրական ակտերով, սակայն քաղաքացիների դիմումները հանրային ընդունարաններ բացատրվում են այն հանամանքով, որ առկա է կամ օրենքի կիրառման չարաշահում, կամ շահառուները՝ օրենքի չինացության և տեղեկացված չլինելու պատճառով անհիմն պահանջներ են ներկայացնում պատկան մարմիններին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրային ընդունարանները գործում էին ոչ բոլոր մարզերում, հեռավոր շրջանների բնակիչների խնդրանքով կազմակերպվել են արտագնա խորհրդատվական հանդիպումներ, ներգրավելով տեղական իշխանության ներկայացուցիչներին:

«Գոլոս Արմենիի» հանրապետական թերթի հետ կազմակերպությունը վաղուց է աշխատում, դեռևս «Հուլյսի փոստ» ծրագրի իրագործման ժամանակներից: Կազմակերպության իրավաբանները մշտապես պատասխանում են զինվորական օրենսդրությանը վերաբերվող հարցերին: Օգտվելով այդ փորձից, կազմակերպությունը շարունակեց տպագրել թերթի էջերին հանրային ընդունարանների խորհրդատվական մեկնաբանությունները:

Քանի որ զորակոչային կանոնակարգի հիվանդությունների ցուցակում 2001թվականին կատարվել են զգալի փոփոխություններ (ՀՀ ՊՆ 07.05.2001 թիվ 322 հրաման), հանրային ընդունարանների այցելուները ծանոթանում այդ փոփոխություններին, որոնք ամբողջությամբ զետեղված են կազմակերպության կողմից հինգերորդ անգամ վերահրատարակված «Մեր որդին և ազգային բանակը» ձեռնարկում: Այն շրջանանների

շահառուները, որտեղ չէին գործում հանրային ընդունարանները, հնարավորություն ունեին ծանոթանալու այդ փոփոխություններին կազմակերպության ինտերնետ կայքիում, որտեղ տեսկայված է ինչպես գիրքն ամբողջությամբ, այնպես էլ լիարժեք տեղեկատվություն զինվորական օրենսդրության վերաբերյալ: Հարկ է նշել, որ ծրագրի ընթացքում կայքի այցելուների թիվը ավելացել է:

Ծրագրի իրականացմանը զուգընթաց կազմակերպությունը նաև վերահսկել է ծրագրի գործունեության արդյունքները: Առավել արդյունավետ աշխատանք է գրանցել հանրապետության հեռավոր շրջաններում, ինչը պայմանավորված է կենտրոնից հեռու լինելու հանգամանքով: Գրանցվել է նաև այցելուների թվի աճ՝ զորակոչի ժամանակ իրենց տղաների իրավունքներն ու շահերը գրագետ պաշտպանել ցանկացող ծնողների շրջանում: Հակ է նշել նաև, որ զինվորական օրենսդրության վերաբերյալ նյութերի տեղադրումը ինտենետ կայքում հանգեցրել է այն բանին, որ Արտերկրում գտնվող մեր քաղաքացիները, որոնք զինվորական պարտավորություններ ունեն մեր երկրի առաւ, ստացել են լիարժեք տեղեկատվություն իրենց իրավունքները պաշտպանելու հնարավորություն տվող նոր օրենքների վերաբերյալ: Օրնքի չիմացության պատճառով այդ մարդիկ վախենում էին վերադառնալ Հայաստան և դիմում էին մեզ հեռախոսով՝ ճշտելու համար փաստաթղթային մանրամասները:

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ.

«ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆՆԵՐԻՆ» /Արաբկիրի շրջանի օրինակով/

Արդեն 8 ամիս է «Հանրային ընդունարանների ստեղծումը ՀՀ մարզերում» ծրագրի շրջանակներում գործում է «Զինվորի մայր» հասարակական կազմակերպության Հանրային ընդունարանը: Այս ժամանակահատվածում **Արաբկիր համայնքի** Հանրային ընդունարան են դիմել մոտ 320 ծնողներ եւ զինակոչիկներ: Թե ինչպիսի հարցեր են հիմնականում արծածվել այդ հանդիպումների ժամանակ, խնդրեցինք ներկայացնել Հանրային ընդունարանի անդամներին՝ Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների զինվորական կոմիսար գնդապետ Վարդան Մինասյանին, Արաբկիր համայնքի կրթության, մշակույթի, սոցիալական հարցերի եւ լրատվական բաժնի պետ Լիաննա Մկրտչյանին, «Զինվորի մայր» հասարակական կազմակերպության վարչության անդամ, Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների զինակոչային հանձնաժողովի անդամ Աիդա Յովնանյանին եւ ՀՀ Պաշտպանության նախարարության սոցիալական վարչության ներկայացուցչին::

Գնդապետ Վարդան Մինասյան - Ամեն օր բաժանմունքի պետերն ընդունում են եւ զինակոչիկների ծնողներին, եւ զինակոչիկներին, իսկ զինվորական կոմիսարը՝ շաբաթ մեկ անգամ, ուրբաթ օրը 15.00-18.00-ին: Այդ օրերին առնվազն 10-15 ծնող դիմում է ինձ: Բնականաբար, զորակոչի ժամանակ այդ թիվը մեծանում է: Հանրային ընդունարանի անդամներին ուղղված հարցերի առաջին բլոկը վերաբերում է առողջությանը, հարցեր, որոնք բազմատեսակ են եւ բազմապիսի եւ հիմնականում վերաբերում են այն զինակոչիկներին, ովքեր անցել են բժշկական հանձնաժողովով, ենթարկվել են ստացիոնար հետազոտման, սակայն ծնողների մոտ տարակուսանք կա, որ իրենց որդիների վերաբերյալ որոշումները կայացվել են ոչ օբյեկտիվ եւ խնդրում են նրանց մեկ անգամ եւս ներկայացնել զորակոչային հանձնաժողովի բժշկական հանձնաժողովին: Իսկ այն հարցերը, որոնք հիմնականում համապատասխանում են իրականությանը, իմ կողմից անմիջապես հրահանգավորվում է եւ նրանք ներկայացվում են զորակոչիկային հանձնաժողովի բժշկական հանձնաժողովին կրկնակի հետազոտման համար:

Լինում են նաեւ դեպքեր, երբ զինակոչիկը թաքցնում է իր այս կամ այն հիվանդությունը, եւ բժիշկ մասնագետը դժվարանում է ճշգրիտ փստորոշել նրա հիվանդությունը: Այստեղ ես բժշկին չեմ մեղադրում, բայց արդեն հասկանալի է, որ հետագայում ծառայության ընթացքում ի հայտ է գալիս այդ հիվանդությունը: Նույնիսկ լինում են դեպքեր, երբ մեր բժշկական հանձնաժողովն է բացահայտում այս կամ այն հիվանդությունը, անգամ ծնողները չեն իմացել, որ իրենց երեխան ունի այդ հիվանդությունը: Եվ հաճախ վրդովում են, երբ մենք երեխային ուղարկում ենք հետազոտության: Բացատրում ենք, որ այդ ամենը կատարվում է պետպատվերի շրջանակներում, որ ոչ մի մոլծուկ իրենք չեն կատարում, նոր դրանից հետո համաձայնվում են երեխային ուղարկել հետազոտության:

Զորակոչային հանձնաժողովի բժշկական հանձնաժողովի մասնագետ բժիշկը, զինակոչիկի մարմնի վրա նկատելով ինքնախեղման, ինքնավնասման հետքեր, ուղարկում է նյարդահոգեբուժական դիսպանսեր հետազոտության՝ նրա առողջական վիճակը ճշտելու համար, որպեսզի զորակոչային հանձնաժողովը հետագայում կարողանա համապատասխան որոշում կայացնել: Նման որոշման հետ համաձայն չլինելով, Հանրային ընդունարան են դիմում այդ զինակոչիկների ծնողները՝ խնդրելով կրկնակի հետազոտություն անցկացնել:

Ընդունելության ժամանակ արծածված հարցերի երկրորդ բլոկը վերաբերում է արտոնություններին: Շատ ծնողներ տեղյակ չեն այն արտոնություններին, որոնցից օգտվում են իրենց երեխաները: Մենք բացատրում ենք, ցույց ենք տալիս օրենքները: 2006թ. գարնանային զինակոչի ժամանակ ավելի շատ բնակավայրին մոտ ծառայելու մասին էին բողոքները: Նրանք տեղյակ չէին, որ 2006թ. հունիսի 1-ից, զորակոչային ռեսուրսներն

ուսումնասիրելուց հետո, որոշվել է մինչև 50 կմ բնակավայրին մոտ տեղեկայված զորամասում ծառայելու արտոնությունը փոխվել է եւ դարձել մինչև 100 կմ: Բնականաբար, մենք բացատրում ենք, համապատասխան օրենքն ենք ցույց տալիս, որն ընդունել է Ազգային ժողովը:

Շատ են լինում հարցեր նաեւ տարկետման իրավունքի մասին: Մենք ծնողներին ներկայացնում ենք արտոնությունների ամբողջ փաթեթը, սակայն շատ ծնողներ ցանկանում են անձամբ դիմել բանակի շտաբի պետին կամ հանրապետական զինվորական կոմիսարին՝ իրենց որդու արտոնությունն ամրագրելու համար: Ձինակոչիկի մասին համապատասխան գրառումներից հստակ երեւում է, թե որ երեխան է օգտվում արտոնություններից: Չեն հիշում որեւիցէ դեպք, երբ մեր զինակոչիկը կենտրոնական հավաքակայանից ետ վերադարձվի, համապատասխան արտոնությունը չկիրառելու համար: Ուզում են ասել, որ ծնողների անհանգստությունը տեղին չէ: Հավաքակայանում եւս զորակոչիկն անցնում է բժշկական ու մանդատային մանրակրկիտ հետազոտություն, նույնիսկ լինում են դեպքեր, երբ զորակոչիկը, կրկնակի հետազոտությունից հետո, ազատվում է զինվորական ծառայությունից:

Կան երեխաներ, որոնք ունեն այս կամ այն հիվանդությունը, սակայն այն հիմք չի տալիս նրանց բանակից ազատվելուն: Այդ երեխաների ծնողները հաճախ են դիմում Հանրային ընդունարան: Մենք, իհարկե, բացատրում ենք, որ կան այնպիսի հիվանդություններ, երբ երեխան պիտանի է զինվորական ծառայության վերապահումով, այսինքն, նա ծառայությունն անցկացնելու է ոչ շարային: Օրինակ, եթե նա ծառայում է կապի կամ մոտորահրաձգային գնդում, իր մասնագիտական որակավորումը բարձրացնելու համար պարտադիր պետք է մասնակցի դասընթացներին, զորավարժություններին եւ այլն, սակայն ծանր աշխատանքներից, ըստ հրամանատարի կարգադրության, ազատված է:

Աղդա Հովնանյան – Մենք խոսեցինք «Ձինծառայության մասին» օրենքում կատարված փոփոխությունների մասին, որոնց զինակոչիկը տեղեկացվում է հենց զինկոմիսարիատում: Բոլորը չէ, որ հետեւում են մամուլին կամ ռադիոյին ու հեռուստատեսությամբ:

Գնդապետ Վարդան Մինասյան - Դրանք գաղտնի ինֆորմացիաներ չեն: Այդ փոփոխություններն ընդունվում են Ազգային ժողովում, հաստատվում երկրի նախագահի կողմից, թերթերում են տպագրվում: Եթե զորակոչիկը տեղյակ չէ իր իրավունքներից եւ պարտականություններից, ապա նա դրանց ծանոթանում է մեզ մոտ անձնական գործերը լրացնելիս, այնտեղ ճշգրտվում է ընտանիքի կազմը, զորակոչիկի նախասիրությունները եւ միաժամանակ նշվում է նրա իրավունքների եւ պարտականությունների մասին եւ, եթե «Ձինծառայության մասին» օրենքում որեւէ փոփոխություններ են եղել, բացատրում ենք, որ նախկինում այսպես էր, հիմա՝ այսպես:

Պետք է նշեն, «Ձինվորի մայր» կազմակերպության դերն այս խնդրում: Կազմակերպությունը ծնողներին եւ զորակոչիկներին իրազեկելու նպատակով «Ձինծառայության մասին» օրենքի ու դրանում կատարված փոփոխությունների եւ շատ հարցերի վերաբերյալ հրատարակել ու հրատարակում է բազմաթիվ գրքեր, որտեղ ոչ միայն նշված են նրանց իրավունքներն ու պարտականությունները, այլեւ այս կամ այն հարցի պարզաբանման համար ում կարելի է դիմել:

Լիաննա Սկրտչյան – Միանալով ձեր լավ նախաձեռնությանը, ուզում են ասել, որ թաղապետարանում 2005 թվականի սեպտեմբերի 25-ից գործում է «թեժ» գիծ, որը բավական նպաստում է Հանրային ընդունարան դիմողների հարցերին անմիջապես պատասխանելուն: Քաղաքացիները մեզ հետ առնչվում են հիմնականում սոցիալական հարցերով եւ ահազանգերն էլ լինում տն սոցիալական անապահով շերտերի կողմից: Շատ են ֆինանսական օգնություն խնդրողները, լինի դա բժշկական ծառայության, թե կոմունալ ծախսերի մարման վերաբերյալ: Ինչպես պարոն Մինասյանը նշեց, շատ են բողոքները հիվանդ տղաներին բանակ զորակոչելու առումով: Հիմա ես մի դիմում ունեն սոցիալապես անապահով կնոջից, որի, իր ասելով, հիվանդ երեխային զորակոչել են բանակ: Ճիշտն ասաց, շատ զարմացա, որովհետեւ իմ անձնական փորձով գիտեմ, որ հիվանդ երեխաներին

չեն զորակոչում: Տղաս փոքր ժամանակ վիրահատություն էր տարել, մենք էլ չենք իմացել, որ բարդություններ են եղել, եւ պատրաստվում էինք նրան բանակ ճանապարհել: Եվ ահա գլխավոր բժշկական հանձնաժողովից տղաս զանգ է տալիս ու ասում, որ ինքն ազատվել է զինվորական ծառայությունից: Եհիշտն ասած, զարմացած էի նման արդարացի վերաբերմունքից: Ուսուցչուհի ունենք, որը միայնակ մայր է, տղան գնաց ծառայության իր բնակավայրից մինչեւ 50 կմ հեռավորության վրա գտնվող զորամասում: Ուզում են շեշտել, որ քանի գնում են բողոքները նվազում են նաեւ զինկոմիսարիատների աշխատանքների շնորհիվ: Մեծ մասամբ մայրերը բողոքում են հիվանդ երեխաներին ծառայության տանելու համար:

Աղդա Հովնանյան – Լինում են դեպքեր, երբ ժամկետային զինծառայողը 2 տարի հետո վերադառնում է տուն, պարզվում է, որ նա մնացել է փողոցում, անտուն: Պատճառն այն է, որ զինվորական ծառայության ժամանակ նա դուրս է գրվել տվյալ բնակարանի գրանցումից: Իսկ, այսպես կոչված, «հոգատար ծնողներն» էլ, առանց տղայի հետագա ճակատագրի մասին մտածելու եւ առանց նրան տեղյակ պահելու, վաճառում են տունն ու հեռանում երկրից: Եթե նույնիսկ նման դեպքերը հազվադեպ են, հարկ է, որ այդ երեւույթի նկատմամբ համապատասխան վերաբերմունք մշակվի եւ օրենքով կանոնակարգվի՝ հօգուտ իր պարտքը կատարած զինվորի:

Լիաննա Սկրտչյան - Մեր համայքում նման դեպքի մասին ոչ մի բողոք չենք ունեցել: Մինչդեռ ունենաւ ահազանգ, որ երեխան բանակից վերադարձել է եւ պետք է գրանցվի իր նախկին հասցեյում, սակայն համատիրության նախագահը չի գրանցում, ասելով՝ 100 հազար պարտք ունեք, մուծեք, որ նոր տեղեկանք տամ: Այդ հարցով հիմա զբաղվում են, որովհետեւ մեկը մյուսի հետ ոչ մի կապ չունի: Եղել է դեպք, երեխան դեռ անձնագիր չի ստացել, բայց արդեն դպրոցն ավարտել է ու դիմել բուհ՝ ընդունելության քննությունների մասնակցելու համար: Այստեղ էլ անհարկի քաջքշուկների պատճառով, տարբեր տեղեկանքներ պահանջելով, ձգձգել են գործերի ընդունումը: Հանրային ընդունարանի անունից դիմեցի Արաբկիրի զինկոմիսարիատ, եւ հարցը շտկվեց: Շատերը չգիտեն իրենց իրավունքների մասին եւ չեն կարողանում պաշտպանել դրանք: Ձեր գրքույկները հարկավոր են նաեւ թաղապետարաններին բաժանել, որ նրանք եւս տեղեկացված լինեն: Մեր օրենքները վատը չեն, մենք ուղղակի չգիտենք դրանց մասին:

Աղդա Հովնանյան - Ես կուզեմայի Հանրային ընդունարանի անունից հատկապես ուշել, որ այլընտանքային ծառայության վերաբերյալ դիմումներ «Արաբկիր» զինկոմիսարիատը ոչ մի հատ չի ստացել: Եվ, ընդհանրապես, ինչպես ուշեց գնդապետ Վարդան Մինասյանը, հանրապետության զինկոմիսարիատները նման դիմումներ չեն ստացել: Եհովայի վկաները գերադասում են դատվել, քան ծառայել:

Հանրային ընդունարանի գործունեության այս 8 ամիսների ընթացքում շատ ծնողներ անհանգստացել են իրենց երեխաների հոգեկան վիճակի համար: Արդեն սկսվել է այն երեխաների զորակոչը, որոնք տեսել են երկրաշարժը, մեծացել են տնտեսական ծանր պայմաններում, շուտով կզորակոչվեն նաեւ պատերազմ տեսած, մութ եւ ցուրտ պայմաններում մեծացած տղաները: Այդ պատճառով ծնողները խնդրում են միջնորդել, որպեսզի զորամասերում հոգեբաններ լինեն:

Ծնողներից շատերն անհանգստացած էին զինծառայողների հանգստի կազմակերպման հարցերով, ազատ ժամանակ նրանք շատ են ունենում, շատ զորամասերում բարձր չէ բարոյահոգեբանական մթնոլորտը: Շատերը խնդրեցին նպաստել զորամասերում գրադարանային ֆոնդի ավելացմանը, զինվորների ազատ ժամանակը հագեցնել տարբեր սպորտային մրցույթներով, հետաքրքիր միջոցառումներով: Պետք է ասել, որ ամեն ինչ պայմանավորված է տվյալ զորամասի հրամանատարի մտավոր կարողություններով:

Այս ժամանակահատվածում մեզ շատ էին դիմում նաեւ սոցիալական, կրթության, բժշկական հարցերով: Խնդրում էին միջամտել, որպեսզի աշխատանքից չկրճատեն, քանի դեռ իրենց որդիները ծառայում են բանակում, որովհետեւ զրկվել են իրենց կերակրողից եւ

այլ հարցեր: Ծնողները հարց բարձրացրին նաև, որ, երբ իրենց որդին ծառայում է բանակում, իրենք ունենան որոշ արտոնություններ բուժսպասարկման ոլորտում:

2006թ. օգոստոսին ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հանրապետական ընդունող հանձնաժողովը որոշում ընդունեց զոհված ազատամարտիկների ընտանիքների երեխաների 8 բալ ստանալու դեպքում տրվող արտոնությունը, այսինքն, չկտրվելու դեպքում մրցույթից դուրս ընդունվելու հնարավորությունը փոխարինել, ընդհանուր հիմունքներով, անցումային միավորներ հավաքելու դեպքում, որպես ուսանող հրամանագրելու հանգամանքը տարածել լրացուցիչ վճարովի ուսուցմամբ ընդունելության (US) վրա՝ ուսման վարձավճարի փոխհատուցումը կատարելով ՀՀ պետական բյուջեով հատկացված միջոցների հաշվին: Ծիշտ է, այդ որոշումը որոշակի արտոնություններ ընձեռեց, սակայն, մեր կարծիքով եւս այս որոշումը ինչ-որ տեղ խաթարում է զոհված ազատամարտիկների հիշատակը, որոնց երեխաներից ոչ բոլորը կարող են լրացուցիչ պարապել եւ ընդհանուր հիմունքներով ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություններ: Ինչ է, ուրեմն, նրանք պետք է դուրս մնան բարձրագույն կրթություն ստանալու գործընթացից: Այդ դեպքում դպրոցներում ուսուցման մակարդակը պետք է այնքան բարձր լինի (որը կասկածում են, որ առաջիկա մոտ 10 տարիներին կհաղթահարենք), որ պատերազմի դաշտում զոհվածի երեխան առանց լրացուցիչ ծախսերի կարողանա ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություն: Սա մի գործընթաց է, որը պահանջում է բավական լուրջ, հիմնավորված մոտեցում:

Մի կարելուր խնդրին եւս կուզենայի անդրադառնալ: Գաղտնիք չէ, որ Հայաստանում այսօր առկա են նաև փախստականների հետ կապված խնդիրները: Մեզ դիմել են նաև շատ փախստականներ, որոնց հիմնական հարցերը կապված էին փախստականների երեխաների զորակոչմանը: «Զինծառայության մասին» օրենքում հստակ գրված է, որ Հայաստանում Ձինված ուժերում ծառայում են միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Մենք բոլորին բացատրում ենք, որ այն փախստականները, որոնք Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ չեն, չպետք է զորակոչվեն Ազգային բանակ:

Շատ փախստականներ դիմել են մեր կազմակերպությանը ոչ միայն զորակոչման հարցերով: Բնակարանային հարցը շատ փախստականների համար հիմնական խնդիրն է. նրանք, ովքեր այդ ծանր տարիներին ստացել են իրենց հարազատների, բարեկամների աջակցությունը եւ ապաստարան են գտել նրանց բնակարաններում, ինչ-ինչ պատճառներով դուրս են մնացել բնակարանային հաշվառումից եւ այսօր հնարավորություն չունեն բնակարան ձեռք բերելու: Այս հարցը, որով պայմանավորված է հայ փախստականների կեցության խնդիրը, կարելուր է նաև պետության համար: Վերջիվերջո, նրանք մեր հայրենակիցներն են եւ կարիք ունեն ոչ միայն պետության հովանավորության, այլեւ ապրելու բարեկեցիկ կյանքով:

Общественной организации «Зинвори майр» 15 лет.

За это время организация принимала активное участие в общественной жизни страны. Становление и продвижение каждой общественной организации связано, прежде всего, с тем, как НПО реагирует на актуальные проблемы в обществе.

Миссия НПО «Зинвори майр» направлена на оказание правовой помощи населению, военнослужащим и их семьям. Естественно, что в процессе деятельности организации много раз приходилось сталкиваться и с коррупционными рисками, от чего и возникала необходимость выполнения той или иной программы по пути антикоррупции. Среди этих программ необходимо выделить многие публикации в прессе, издание специальных книг по информированию населения в области военного законодательства. Особое место в этом ряду занимает пособие «Наш сын и национальная армия», переизданное много раз. Помощь, оказанная пользователям посредством этой книги, по отзывам общественности – неоценима. Она стала настольной книгой призывника и его семьи.

Организация «Зинвори майр» является членом действующей Коалиции «Антикорр». Коалиция образовалась в 2004 году, в нее входят 12 общественных организаций. («Ахиллес», «Асклепи», «Зинвори майр», Национальный центр по мониторингу либерализации процессов, «Армянские купцы», «Защита прав потребителей», Центр развития малого и среднего предпринимательства, Союз производителей и предпринимателей, «Акаствер», «Фемида», Ассоциация по образованию и исследованию, Армянская PR Ассоциация).

За короткий срок существования Коалиции каждая организация, выполняя свою миссию, в то же время плотно сотрудничала с коллегами. Этим создавалась возможность осуществления идеи Коалиции – выполнить совместную программу.

Как только со стороны правительства Армении была разработана программа по борьбе с коррупцией, организация «Зинвори майр» вместе с другими членами Коалиции вовлеклась в эту борьбу, работая в своей сфере деятельности как и все организации – члены Коалиции, которые в своей профессиональной деятельности разрабатывают проблемы, связанные с борьбой против коррупции.

Многолетнее сотрудничество общественных организаций с представительством Организации Безопасности и Сотрудничества в Европе в Армении имеет свои успехи, которые отражаются в достижениях в области миротворчества, строительства гражданского общества, в становлении и укреплении самих НПО.

В 2006 году от Коалиции было предложено руководству ОБСЕ провести мероприятия для всех членов Коалиции одновременно.

Среди приоритетных направлений, было отмечено также создание и функционирование общественных приемных. «Зинвори майр», имея большой многолетний опыт по работе в общественных правовых консультациях, выбрало это направление и успешно осуществила идею функционирования общественных приемных в фокусе антикоррупционной борьбы.

Основным достижением осуществленного проекта стало не только повышение уровня информированности населения, но и внедрение опыта функционирования общественных приемных в разных районах республики.

Важно отметить, что в рамках данного мероприятия между общественной организацией, силовыми структурами и органами местного самоуправления установилось взаимопонимание и тесное деловое сотрудничество.

В рамках программы, для прослеживания хода ее реализации, а также с целью выяснения эффективности деятельности общественных приемных, периодически раздавались посетителям приемных для заполнения анкеты и опросные листы. Всего было собрано 1200 заполненных анкет. После обобщения результатов подобного опроса представилась следующая картина:

1. С Законом РА «О Воинской обязанности» знакомы 39% респондентов, 12% опрошенных знают о каких-то пунктах Закона от знакомых и родственниках. Остальные 49% не знакомы с Законом.

2. 64 % респондентов отметили доброжелательное отношение работников военкоматов к призывнику, 19% оценили это отношение как чуткое, 14% - как равнодушное, 3% - как враждебное.
3. Большинство родителей больных призывников – 62% - знают, какие документы надо предъявлять в случае болезни призывника, 38% из них не знают этого.
4. Со структурой военных медицинских учреждений знакомы лишь 26% опрошенных, 74% не знают этого.
5. С несправедливостью в армии сталкивалось большинство опрошенных – 62%, остальные 38% не встречались с такими проявлениями.
6. 32% респондентов сталкивались с явлением вымогательства в армии и военно-медицинских учреждениях и считают это частым явлением, 68% не отрицают этого, однако считают, что это не частое явление.
7. 69% опрошенных уверены, что в случае «платной самоволки» виноваты родители, 31% указывают других «виновников» - младших командиров и самих солдат.
8. 68% респондентов видят позитивные сдвиги в армии, 32% - не могут отметить таких сдвигов.
9. На вопрос, какие изменения вы хотели бы увидеть в армии, было дано множество ответов, среди которых наиболее часто повторяются:
 - Усиление дисциплинарного порядка,
 - Сокращение срока службы,
 - Призыв всех граждан мужского пола по достижении 18 лет, независимо от статуса,
 - Строгий контроль за продуктами
 - Строгий контроль за горюче-смазочными материалами,
 - Улучшение санитарно-гигиенических условий в казармах и столовых,
 - Правильный выбор офицерских кадров,
 - Систематизация посещений родителей,
 - Организация борьбы против протекционизма и коррупции,
 - Повышение уровня грамотности солдат,
 - Организация досуга солдат,
 - Пополнение воинских частей психологами-педагогами,
 - Увеличение библиотечного фонда в воинских частях.

За время реализации проекта в полном объеме работали Общественные приемные в Ереване и марзах республики – Ширакском, Лорийском, Армавирском, Сюникском, Гегаркуниском. Они включали в себя представителей государственных, силовых структур, а также представителей местной власти и общественности. Приемные располагались, как правило, в зданиях мэрии, Домах культуры, в школах и т. д. Население воспринимало работу Общественных приемных как последнее достижение сотрудничества государственных, муниципальных и общественных структур, поскольку именно здесь они могли изложить свою жалобу или просьбу напрямую тому чиновнику или представителю военкомата, с которым им сложно встретиться в других условиях.

В Общественные приемные за период реализации проекта обратились 1677 человек, из которых мужчин - 738 ; женщин – 939.

Статистическое исследование вопросов, по которым бенефициарии программы обращались в Общественные приемные, дало следующую картину:

- Проблема по состоянию здоровья призывника и военнослужащего, результаты медицинского обследования – 35%
- Проблема освобождения от действительной военной службы – 8%
- Проблема получения инвалидности во время службы – 3%
- Проблемы призыва сына одинокой матери – 4%

- Проблемы по отмене льгот при поступлении в вузы республики -12%
- Проблемы по обеспечению жилья семей военнослужащих – 1%
- Проблема трудоустройства после демобилизации – 1%
- Проблема сохранения рабочего места родителей солдат во время их службы в армии – 8%
- Консультации по судебным делам военнослужащих – 10%
- Проблемы по социальной защите военнослужащих и их семей – 12%
- Проблема льготного медицинского обслуживания семей военнослужащих – 6%

Все вышеназванные проблемы регулируются действующим законодательством или нормативными актами, однако обращение граждан в Общественные приемные объясняется тем, что либо имела место деформация при применении закона, либо, в силу неинформированности и незнания закона со стороны пользователей, к соответствующим структурам предъявлялись необоснованные требования.

В связи с тем, что Общественные приемные работали не во всех районах республики, возникла необходимость помочь тем районам, где не были они открыты, в связи с чем функционирование общественных приемных вышла за рамки самих приемных. Были организованы выездные консультационные сессии с привлечением представителей местной власти.

С газетой «Голос Армении» организация работала давно и плодотворно еще в период реализации проекта «Почта Надежда». Юристы организации постоянно отвечали на письма читателей по поводу военного законодательства. Воспользовавшись этим опытом «Наша приемная» была включена в работу по проекту Общественных приемных, давая комментарии и рекомендации на страницах газеты.

Учитывая тот факт, что были произведены большие изменения в Списке болезней, соответственно приказу министра обороны РА № 322 от 07.05.2001 года, в Общественных приемных можно было познакомиться с этими изменениями по книге «Наш сын и национальная армия», в пятый раз переизданной организацией «Зинвори майр». Бенефициарии тех районов, где не действовали Общественные приемные, пользовались также информацией на Интернет сайте организации, где помещена и книга, и вся информация по военному законодательству. Кстати, на этот сайт поступало много вопросов и предложений. Необходимо отметить, что многие наши бенефициарии понятия не имели о том, что такое «сайт в Интернете» или как им пользоваться.

По ходу реализации проекта организация также занималась мониторингом результатов деятельности по проекту. Наиболее эффективно сказалась работа Общественных приемных в самых отдаленных районах, что в большей степени связано с отдаленностью района от центра. Было зафиксировано также значительное повышение активности родителей в области грамотной защиты прав своих сыновей в период призыва. Надо отметить также, что помещение военного законодательства в Интернете привело к тому, что многие наши соотечественники, проживающие за границей и имеющие военные обязательства перед нашей страной, получили полную информацию относительно своих прав, предоставленных новыми законами. Из-за незнания законов эти люди боялись вернуться в Армению и связывались с нами уже по телефону, уточняя лишь технические стороны вопроса.

КРУГЛЫЙ СТОЛ: «ОТНОШЕНИЕ ОБЩЕСТВЕННОСТИ К ОБЩЕСТВЕННЫМ ПРИЕМНЫМ (на примере Арабкирского района)

Уже 8 месяцев в рамках проекта «Создание общественных приемных в марзах Армении», реализуемого общественной организацией «Зинвори майр», действуют общественные приемные. За этот период в общественную приемную **Арабкирского района** обратились 320 призывников и их родителей. На вопрос, какие вопросы поднимались на встречах в приемных, мы попросили ответить участников приемных – военкома Арабкирского района полковника Вардана Минасяна, начальника отдела культуры, образования, прессы и социальных вопросов мэрии Арабкира Лиану Мкртчян, члена президиума организации «Зинвори майр», члена призывной комиссии Арабкирского военкомата Аиду Овнанян и представителя социального управления МО РА.

Полковник Вардан Минасян:

Начальники отделений принимают призывников и их родителей каждый день, а военком – раз в неделю, в пятницу с 15.00 до 18.00. В эти дни не менее 10-15 родителей приходят ко мне на прием. Естественно, что во время призыва это число увеличивается. **Первый блок** вопросов, задаваемых членам приемной, касается вопросов здоровья призывников. Эти вопросы многочисленны и многогранны и, в основном, касаются тех призывников, которые прошли медкомиссию, были направлены в стационар, однако родители сомневаются в объективности окончательного диагноза и просят еще раз направить его на медицинскую комиссию. В тех случаях, когда опасения родителей оправданы, по моему указанию призывник снова направляется на комиссию на повторное обследование. Бывают случаи, когда призывник скрывает свое заболевание, и врач-специалист затрудняется точно определить его состояние. Здесь вины врача я не вижу, однако уже ясно, что на службе у данного призывника проявляется то или иное заболевание. Бывают даже случаи, когда врачи нашей медкомиссии выявляют какую-то болезнь призывника, о которой даже родители ничего не знают и часто бывают недовольны тем, что сына направляем на обследование. Мы объясняем им, что все это делается для пользы самого призывника, что обследование бесплатное, только после этого они соглашаются пойти в больницу.

Врач медкомиссии, заметив на теле призывника следы порезов или попыток членовредительства, направляет его на обследование в нервно-психиатрический диспансер для уточнения его состояния для того, чтобы призывная комиссия могла бы впоследствии вынести правильное решение. В общественные приемные приходят те родители, которые не согласны с этими решениями, и просят провести повторное обследование.

Второй блок вопросов касается льгот. Многие родители не знают о них. Мы объясняем им, показываем закон. Во время весеннего призыва 2006 года много было жалоб по поводу льгот некоторых категорий призывников на службу на расстоянии 50 км от места жительства. Родители не знали, что после переучета ресурсов, принято решение с 1 июня 2006 года считать льготами службу на расстоянии 100 км от места жительства. Естественно, мы показываем текст закона, который был принят Национальным Собранием РА.

Много вопросов по поводу права на отсрочку. Мы представляем родителям весь пакет льгот, однако многие из них хотят лично обратиться к начальнику Генерального Штаба или военкому Республики для закрепления прав своего сына на отсрочку. Из записей в личном деле призывника четко видно, что мальчик пользуется льготами. Не помню ни одного случая, чтобы призывник нашего района был бы возвращен с Центрального Сборного пункта из-за нарушения прав призывника на льготы. Хочу сказать, что волнение родителей здесь неуместно. На Сборном пункте призывник опять проходит тщательное медицинское и мандатное обследование, даже бывают случаи, когда призывник после двухкратного обследования, по решению комиссии на Сборном пункте освобождается от службы. Есть мальчики, которые имеют то или иное

заболевание, однако это не дает им основания для освобождения от службы. Родители этих призывников часто обращаются в общественные приемные. Мы, конечно, объясняем им, что при некоторых заболеваниях мальчик должен служить, хотя и с некоторыми ограничениями характера службы, т. е. идти на не строевую службу. Например, если он служит в мотострелковой части, для повышения своей профессиональной подготовки он должен участвовать на подготовке, учениях, сборах и т.д., однако от тяжелой работы по указанию командира он должен быть освобожден.

Аида Овнанян: Мы поговорили о тех изменениях в Законе РА «О воинской обязанности», с которыми призывника знакомят прямо в военкомате. Не все следят за материалами в прессе и на телевидении.

Полковник Вардан Минасян: Все это не является закрытой информацией. Эти изменения принимаются Национальным Собранием, ратифицируются Президентом Республики, публикуются в печати. Если призывник не знает о своих правах и обязанностях, его знакомят с ними в военкомате, при заполнении личного дела. При этом уточняется семейный состав, способности и склонности призывника и параллельно ведется разъяснение прав и обязанностей. Если в Законе произошли изменения или дополнения, то мы обязательно объясняем различие между старым и новым пунктом Закона.

Должен отметить роль общественной организации «Зинвори майр» в данном вопросе. Организация долгие годы ведет среди своих пользователей разъяснительную работу по военному законодательству. С целью информирования призывников, а также для разъяснения их прав и обязанностей, организация издала много книг и пособий, где дается полная информация по военному законодательству, приводятся все адреса и телефоны, по которым призывник и его родители могут обращаться для защиты своих прав.

Лианна Мкртчян: Разделяя ваше хорошее начинание, хочу сказать, что в муниципалитете с 25-го сентября 2005 года действует «горячая линия», что способствует более оперативному реагированию на вопросы, по которым обращаются к нам пользователи Общественных приемных. В основном, к нам обращаются социально малообеспеченные граждане, и вопросы их, в большинстве, касаются социальных тем. Много заявлений о финансовой помощи для погашения медицинских или коммунальных затрат. Как отметил г-н Минасян, большое количество жалоб касается призыва больных мальчиков. У меня сейчас на руках заявление от социально необеспеченной гражданки, где она жалуется, что призвали ее больного сына. Честно говоря, это заявление меня удивило, т.к. я знаю, что больных не призывают. Мой сын в детстве перенес операцию, и мы, даже не зная, что у него остались осложнения, собирались проводить его на службу. Однако с Республиканской комиссии сын звонит нам и говорит, что его освободили от службы. Откровенно говоря, я была удивлена таким справедливым подходом. Знаю и другой случай, когда сына учительницы, одинокой матери, отправили служить в воинскую часть, находящуюся в 50 км от места жительства.

Хочу подчеркнуть, что постепенно жалобы уменьшаются, в чем немаловажную роль играет работа военкоматов.

Аида Овнанян: Бывают случаи, когда отслужив 2 года и возвратившись домой, демобилизованный солдат выясняет, что он оказался без крова, на улице. Причина в том, что, уехав на службу, он выписался с места жительства, а так называемые «чуткие родители», не заботясь о будущем своего сына, за время службы сына продали квартиру и уехали из страны, не спросив его согласия. Если даже такие случаи и единичны, необходимо выработать соответствующее решение и закрепить его законодательным образом, в солдата, пользу выполнившего свой гражданский долг.

Лианна Мкртчян: В нашей общине не было ни одного подобного случая. С другой стороны, мы получили сигнал, что мальчик вернулся из армии и должен восстановить прописку по месту проживания, но председатель кондоминиума не прописывает, аргументируя тем, что у них задолженность 100 000 драм и мальчика пропишут только после внесения этой суммы. Я

сейчас занимаюсь этим вопросом, т.к. одно с другим никак не связано. Были также случаи, когда ребенок еще не получил паспорт, однако, окончив среднюю школу, хотел подать дела для поступления в вуз. Но здесь стали чинить ему препятствия, требуя разные справки. От имени Общественной приемной я обратилась в Арабкирский военкомат, и вопрос сразу отрегулировался. Многие не знают о своих правах и не могут защитить их. Книги организации нужно раздать и в муниципалитетах, чтобы они также были проинформированы по поводу военного законодательства. У нас неплохие законы, просто мы не знаем про них.

Аида Овнанян: Я хочу особо отметить, что по поводу альтернативной службы в Арабкирский военкомат заявления не поступали. И, как отметил полковник Минасян, в другие военкоматы республики подобные заявления также не поступали. А Свидетели Иеговы предпочитают тюрьму, чем службу в армии.

За 8 месяцев деятельности Общественных приемных многие родители обращались с тревогой по поводу психического состояния своих сыновей. Начался призыв тех мальчиков, которые пережили землетрясение, выросли в тяжелейших экономических и бытовых условиях. Скоро будут призваны мальчики военного времени, детство которых прошло в холодные и темные годы. Исходя из всего этого многие родители поднимают вопрос о необходимости работы психолога в воинских частях.

Многие родители обеспокоены проблемой свободного времени солдат, которое редко бывает организованным и направленным, а также общей морально-психологической атмосферой в армии. Родители просили увеличить библиотечный фонд в воинских частях, организовывать различные спортивные и культурные мероприятия, конкурсы, турниры и т.д. При этом отмечали, что все зависит от интеллектуальных возможностей командира.

За период работы приемной к нам обращались с социальными, образовательными, медицинскими вопросами. Просили ходатайствовать, чтобы не сократили рабочее место солдатских родителей в период службы сына. Многие родители просили восстановить льготы на медобслуживание в период службы сына.

По поводу отмены льгот при поступлении в вузы для детей погибших военнослужащих необходимо отметить, что организация «Зинвори майр» выработала стратегию по лоббированию изменений в законе или принятию нормативных актов, регулирующих данный вопрос. Представители организации имели многочисленные встречи и рабочие совещания с представителями заинтересованных государственных и правительственных структур. Были представлены в соответствующие учреждения заявления абитуриентов-льготников, а также материалы мониторинга по данному вопросу.

В августе 2006 года Республиканская приемная комиссия министерства науки и образования РА изменила порядок приема льготных абитуриентов. РПК приняла решение о зачислении льготных студентов на очное платное отделение государственных вузов при условии набора минимального проходного балла по дополнительному приему. При этом, и это очень важно, плата за обучение этих студентов должна быть погашена за счет государственных средств.

Это касается и заочного обучения. Согласно «Правилам по приему на заочное отделение вузов РА» (главы 4, статья 28, пункт «б») дети военнослужащих, погибших, или ставших инвалидами при защите РА, пользуются правом государственного возмещения платы за учебу в полном размере установленного тарифа.

Следует рассмотреть еще один немаловажный аспект деятельности Общественных приемных. Все мы знаем, что сегодня Армении существует проблема беженцев. В приемные, в основном, обращались беженцы, чьих детей призывали в армию. В Законе РА «О воинской обязанности» написано, что в Вооруженные Силы РА призываются граждане Республики Армения. Мы объясняем всем, что беженцы, не являющиеся гражданами РА, не должны служить в армии.

Беженцы обращались в приемную по разным вопросам. В основном – это квартирный вопрос: те беженские семьи, которые в тяжелые годы нашли приют у своих близких и родственников, по каким-то причинам не были включены в списки нуждающихся в жилье, а сегодня они не в состоянии приобрести квартиры. Этот существенный для беженцев вопрос, важен и для государства. Ведь они – наши соотечественники и нуждаются не только в государственной опеке, но имеют право на благоустроенную жизнь.